# ՎԱԶԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԴԱՇԻՆՔԸ ՎԱԽՃԱՆՎԵՑ



Նա խիստ բացասաբար բնութագրեց երկրի քաղաքական եւ տնտեսական իրավիճակը: Պրն. Մանուկյանի կարծիքով, տարվա ընթացքում, չնայած արտաքին որոշ տեղաշարժերին, վիճակը վատթարացել է, մասնավորապես, արդյունաբերության, գյուղատնտեսության մեջ եւ նույնիսկ առեւտրի ոլորտում, ուր վերջերս ընդունված փոփոխությունները կհանգեցնեն մեկ-երկու առեւտրական մենաշնորհների ստեղծման:

Իր ելույթում Վ.Մանուկյանը հատուկ ուշադրություն դարձրեց ղարաբաղյան շարժման իդեալների գնահատմանը, որոնք ներկայիս իշխանությունների կառավարման օրոք մեծ փոփոխություններ կրեցին: Մասնավորապես, նրա խոսքերով, մեծ շեղումներ կատարվեցին աշխարհում տեղի ունեցող գործընթացներում հայ ժողովրդի դերակատարության գնահատականի մեջ: Այսպես, ակտիվորեն, այդ թվում նաեւ Հրանտ Մաթեւոսյանի կողմից, քարոզվում է այն գաղափարը, որ հայ ժողովուրդը շատ սովորական ժողովուրդ է: Նման մոտեցումը, պրն. Մանուկյանի խոսքերով, հայ ժողովրդին զրկում է զարգացման հեռանկարներից եւ միաժամանակ իշխանություններին ազատում բազմաթիվ խնդիրների լուծման պատասխանատվությունից: Բացի այդ, խախտվել է ղարաբաղյան շարժման հիմնական սկզբունքներից եւս մեկը՝ ժողովուրդը պետք է միայն իր վրա հույսը դնի, իսկ ներկայումս Հայաստանի ժողովուրդը իր ապագան հաճախ կապում է Համաշխարհային բանկի եւ ուրիշների խորհուրդների հետ:

Այդ սկզբունքները մեծ նշանակություն ունեն, Վ.Մանուկյանի խոսքերով, քանի որ ամենասկզբից դրանք դարձան անկախ պետության քաղաքականության, այդ թվում եւ արտաքին քաղաքականության հիմնարար սկզբունքները: Ինչ վերաբերում է վերջինին, ապա ԱԺՄ առաջնորդը այն բնութագրեց իբրեւ ծույլ եւ հայտարարեց, որ հայկական արտաքին քաղաքականությունը իր բոլոր հնարավորությունները չի օգտագործում՝ առաջին հերթին ղարաբաղյան խնդրի լուծման գործում:

«Ես Ղարաբաղի անկախության հարցը կդնեի 1992-93թթ., երբ Քելբաջարի, Ֆիզուլու եւ Աղդամի գրավումից հետո ջարդվել էր ադրբեջանական բանակի ողնաշարը, Ադրբեջանում խուճապ էր, իսկ միջազգային ուժերը դեռ չէին միավորվել: Ես գտնում եմ, որ այդ լարված պահին կարելի էր փորձել հարցը լուծել նման ձեւով: Սակայն այն ժամանակ այդ խնդիրը չլուծվեց եւ մենք նոր փուլ մտանք, երբ նրա լուծման հարցում առաջին պլան մղվեց ամբողջ հայության միավորման գաղափարը: Իսկ դրա փոխարեն արգելվեց Դաշնակցության գործունեությունը, սկսվեցին մանր խաղեր Սփյուռքի նկատմամբ, ինչը թուլացրեց մեզ: Ցանկացած միջազգային ճնշման դեպքում մենք չենք կարող զիջել ԼՂՀ անկախության հարցում»,- հայտարարեց Վ.Մանուկյանը: Նա նշեց ԼՂՀ եւ Ադրբեջանի միջեւ ուղղակի բանակցությունների անհրաժեշտությունը:

Ի պատասխան Ազգային համաձայնության դաշինքի նկատմամբ իր վերաբերմունքի վերաբերյալ հարցին Վ.Մանուկյանը նշեց, որ դաշինքի ստեղծումն իրեն չարդարացրեց: Դաշինքը «մեռավ», բայց դա չի նշանակում, որ կուսակցությունները կհրաժարվեն իրենց նպատակներից: Նա նկատեց, որ կշարունակվի համագործակցությունը այն կուսակցությունների հետ, որոնք համամիտ են ԱԺՄ մոտեցումներին:

Ն Տ